ՀՏԴ 616

ԱՐԱՅԻԿ ՖԻՐՅԱՆ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
հայցորդ

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Համառոտագիր

Հոդվածում ներկայացված է արցախահայության ազգային ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական նկարագիրը: Քննարկվում են որոշ գրավոր վկայություններ, որոնք նկարագրում են ազգային ինքնագիտակցության առանձնահատկությունները: Ներկայացված են Արցախի հիմնախնդրի ներկա վիճակի վերաբերյալ ներպետական և միջազգային պատկերացումների դինամիկան և այդ պատկերացումների ազդեցությունը արցախահայության ազգային ինքնագիտակցության զարգացման վրա: Դիտարկվում են նաև ազգային ինքնագիտակցության դրսևորման որոշ գործոնները ներկայիս արցախյան հասարակությունում:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ *ազգային ինքնագիտակցություն, նույնականություն, կոնսոլիդացիա, սոցիալական պահանջմունք*

Արցախահայության ազգային ինքնագիտակցության հոգեբանական ֆենոմենը ուսումնասիրվում է հարակից մի շարք հասարակագիտական ու հումանիտար գիտությունների շրջանակներում: Այն ենթադրում է պատմական հիշողության և ազգային հավաքական «Ես»-պատկերի ձևավորման, անձի ինքնառեալիզացիայի և սոցիալականացման բարդ գործընթացների ամբողջական քննություն, որտեղ իր դերն ունեն արցախահայության պատմությանը, լեզվին, մշակույթին ու հոգեկան կերտվածքին վերաբերող բազմաբնույթ ուսումնասիրությունները, ազգային նույնականությունը վկայող տվյալ հողի նկատմամբ հավաքական տիրոջ գիտակցության բացահայտումը, ինչն արտահայտվում է պատմական հայրենիքի մաս կազմելու զգացումով:

Այս առումով հետաքրքիր են որոշ օտարաղբյուր վկայություններ՝ կովկասաբնակ ազգաբնակչության ազգային նկարագրի վերաբերյալ: Կ. Հ. Ղահրամանյանը և Ա. Ս. Ղազիյանը «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. պետականության ակունքները» գրքում նշում են ցարական Ռուսաստանի պաշտոնական աղբյուրներում շրջանառվող ընդհանուր կարծիքը՝ կովկասաբնակ ժողովուրդների ազգային նկարագրի մասին, ինչի համատեքստում էլ դիտարկում են Արցախի հայերի ազգային ինքնության դրսևորումները: Համաձայն այդ կարծիքի՝ վրացական ժողովուրդների անցյալ դարի սկզբի աղբյուրները գնահատվում են որպես փակ և հետամնաց, որոնք «ոչ մի դեր չեն կատարում Կովկասի երկրամասի համար» [1, էջ 45]: Կովկասյան թաթարները, որոնք կիսանստակյաց, կիսաքոչվոր կյանք են վարում, նկարագրվում են հետևյալ կերպ. «ադրբեջանական թաթարները վրիժառու են ու տգետ, հակված են խաբեբայության, գողության ու կողոպուտի, որի պատճառով չարիք են հանդիսա-

նում նստակյաց ժողովուրդների համար» [1, էջ 46; տես՝ 6, էջ. 837-838]: Ի տարբերություն վերը նշված ժողովուրդների նկարագրի՝ նույն աղբյուրներում հանդիպում ենք հայերին տրված հետևյալ գնահատականներին. «հայերը դրսևորում են մեծ հակվածություն եվրոպական կրթության և առևտրով ու արդյունաբերությամբ զբաղվելու նկատմամբ: Ազգային զգացումը նրանց չափազանց ուժեղ է զարգացած: Իրենց ձեռներեցության և առևտրի նկատմամբ հակվածության շնորհիվ քաղաքաբնակ հայերը իրենց մենաշնորհն են դարձրել համարյա ամբողջ առևտուրն ու արդյունաբերությունը Կովկասյան երկրամասում, որի բնակչության զգալի մասը գտնվում են նրանցից լրիվ կախվածության մեջ» [1, էջ 46; տես՝ 6, էջ. 838]: Կ. Հ. Ղահրամանյանի և Ա. Ս. Ղազիյանի կողմից կատարված այս դիտարկումը շատ կարևոր է հասկանալու համար թե՛ ցարական Ռուսաստանի ազգային խտրական քաղաքականության հիմքը հանդիսացող ռազմավարությունը՝ ուղղված տնտեսապես կայուն ու անկախությանը ձգտող հայերին ղեկավարելուն, թե՛ աչքի ընկնող հայերի «ազգային ուժեղ զգացումը» թուլացնելու կայսերական նկրտումները: Ի հակադրություն դրան՝ հայերի շրջանում աստիճանաբար ուժեղանում էր իրենց հողի հետ նույնականացման ազգային այն զգացումը, որն ընկած է ազգային ինքնագիտակցության հիմքում:

Վարչականորեն Արցախի տարածքը, 19-րդ դարի առաջին քառորդում անցնելով Ռուսաստանի կայսրությանը, կազմեց Ելիզավետպոլի նահագի Շուշիի, Ջևանշիրի և Ջաբրաիլի շրջանները: Այն մշտապես դիտարկվում էր որպես պատմական Հայաստանի անբաժանելի մաս և աղբյուրներում ներկայացվում իր հայկականությամբ: Տարածաշրջանի խորհրդայնացման հետ մեկտեղ Լեռնային Ղարաբաղն անցավ Խորհրդային Հայաստանի կազմի մեջ (1921 թ. հուլիսի 3), իսկ մի քանի օր անց (1921 թ. հուլիսի 5) Կովկասյան բյուրոյի որոշմամբ անսպասելիորեն տրվեց Խորհրդային Ադրբեջանին՝ հաշվի առնելով «հայերի և մահմեդականների միջև ազգային համերաշխության» անորոշ պատճառաբանումը: Այսպես՝ 95% հայերով բնակեցված Արցախի երկրամասը, առանց պատշաճ վարչարարարության ու խնդրի պատմական, սոցիալ-տնտեսական ու հոգեբանական կողմերը հաշվի առնելու, բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին՝ վարչականորեն վերածվելով Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի [տե՛ս 3, էջ 18-21]: Եվ չնայած որ արցախահայությունը 20-րդ դարի ողջ ընթացքում փորձում էր բարձրացնել ՀԽՍՀ վերամիավորման հարցը (1920-ական թթ. սկիզբ, 1945 թ., 1967 թ., 1977 թ.) [3, էջ 18-21], այնուամենայնիվ խնդրի հանգուցալուծումը եղավ ԽՄ-ում Վերակառուցման քաղաքականությամբ սկիզբ դրած սոցիալական, հոգեբանական և քաղաքաիրավական լուրջ տրանսֆորմացիոն գործընթացների դինամիկան:

Այժմ ներկայացնենք Արցախի հիմնախնդրի ներկա վիճակի վերաբերյալ ներպետական և միջազգային պատկերացումների դինամիկան և այդ պատկերացումների ազդեցությունը արցախահայության ազգային ինքնագիտակցության զարգացման վրա:

Ինչպես իրավացիորեն նշում է Դ. Բաբայանը, Արցախի հիմնախնդրի բարձրացումն ու, առավել ևս, անկախության հռչակումը, Ադրբեջանի Հանրա-

պետության համար շարունակում է մնալ անընդունելի, քանի որ սեփական գոյության համար լրջագույն վտանգ է ներկայացնում՝ անդրադառնալով ադրբեջանցիների էթնո-քաղաքական նույնականության հիմնախնդրին [5, էջ 22-31]: Ադրբեջանում ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ մեկ ազգի նույնականության վերաբերյալ պատկերացումը ձևավորվում է մեկ այլ ազգի ինքնուրույնությունը բացառելու միջոցով: Այլ խոսքերով՝ այդ երկրում մեկ ազգի ինքնորոշման փաստը ընկալվում է որպես մեկ այլ ազգի ինքնորոշման իրավունքը ժխտող հանգամանք: Հեղինակն անդրադառնում է այս խնդրին՝ հիմնվելով ադրբեջանական ազգի և ինքնության ձևավորման առանձնահատկությունների վրա: Մասնավորապես մատնանշվում է այն փաստը, որ ադրբեջանական էթնոսի ձևավորման գործընթացը սկսվել է 20-րդ դարի 30-ական թվականներին, երբ մահմեդական ազգությունների կոնսոլիդացիայի հիմքում ընկած էր ընդհանուր վարչական տարածքին պատկանելության զգացումը: Տարբեր ազգությունների ներկայացուցիչները նույնականացնում էին «ադրբեջանցի» էթնոնիմով՝ որպես Ադրբեջանի բնակիչներ: Ադրբեջանի ազգաբնակչության համար դա միակ հնարավոր ուղին էր ձևավորելու ազգային ինքնագիտակցության տարրեր, քանի որ «Ադրբեջան» երկրի անվանումը կապված չէր երկիրը բնակեցնող և մեծամասնություն կազմող որևէ ժողովրդի հետ [5, էջ 23-24]: Այսպես՝ ադրբեջանաբնակ ազգություններից հեղինակը նշում է լեզգիններին, թալիշներին, թաթերին, քրդերին, լեռնային և թյուրքական ազգերին: Աստիճանաբար ազգային կոնսոլիդացիայի կենտրոնական դերակատարումն անցավ թյուրքական էթնոսին և «ադրբեջանցի» էթնոնիմը սկսեց նույնացվել այդ ազգության ներկայացուցիչների հետ, ինչի արդյունքում ադրբեջանաբնակ այլ ազգերի մոտ զարգացավ ընկալումը նրա վերաբերյալ, որ թուրքական ծագում ունեցող ադրբեջանցիները այլ ժողովուրդներին պարտադրում են ազգային կոնսոլիդացիայի և ինքնագիտակցության իրենց պատկերացումը [5, էջ 24]: Այստեղ է հենց թաքնված արցախյան հիմնախնդրի նկատմամբ Ադրբեջանի կողմից արտահայտված խիստ բացասական վերաբերմունքը: Արցախի ինքնորոշման և անկախության հետ մեկտեղ վտանգվում են Ադրբեջանի ազգային կոնսոլիդացիայի հիմքերը, ստեղծվում են նախադեպեր նաև այլ ադրբեջանաբնակ ազգությունների (լեզգիններ, թալիշներ և այլն) կրկնելու արցախահայության օրինակը:

Այժմ դիտարկենք արցախահայության ազգային ինքնագիտակցության որոշ առանձնահատկությունները:

Ազգային ինքնագիտակցության զարգացման վերաբերյալ հետաքրքիր նյութ է հաղորդում Հ. Մարությանը իր «Հայերի ցեղասպանությունը. պատմական հիշողությունը և ստերեոտիպերի փոխակերպումը ըստ Ղարաբաղյան շարժման ցուցապաստառների» հոդվածում [2, էջ 22-24]: Ցուցապաստառներում առկա տեղեկատվությունը անգնահատելի է Ղարաբաղյան շարժման ողջ ընթացքը դիտարկելու, ազգային ինքնագիտակցության զարգացման դինամիկան նկարագրելու համար, քանի որ այդ ցուցապաստառները բնորոշում են Արցախում ցուցարարների պահանջատիրությունը և ուղղորդում Ղարաբաղյան շարժման ընթացքը: Հեղինակն իրավացիորեն նշում է Ղարաբաղյան

շարժման ծավալմանը զուգընթաց հայալեզու ցուցապաստառների քանակի աճը՝ շարժման սկզբում օտարալեզու ցուցապաստառների համեմատությամբ: Դա նշանակում է, որ եթե շարժման սկզբում ցուցապաստառները հասցեագրված են եղել արտաքին աշխարհին, ապա աստիճանաբար ցուցապաստառներում առկա տեղեկատվությունը դառնում է հայերեն՝ նպատակաուղղված լինելով Արցախի ազգաբնակչությանը: Այս երևույթը մենք բնութագրում ենք որպես «ազգային կոնսոլիդացիայի սինդրոմ», որը բնորոշվում է հոգեբանական պաշտպանության համապատասխան գործոններով: Ձևակերպված եզրույթը կարելի է մեկնաբանել երկակի՝ ըստ կոնսոլիդացիայի արտաքին և ներքին աղբյուրների: Այն դեպքում, երբ ազգային կոնսոլիդացիայի արտահայտչամիջոցները ուղղված են արտաքին աշխարհին և նկարագրվում են օտարալեզու հայտարարությունների, ցուցապաստառների, արտաքին աշխարհին հասանելի տեղեկատվության միջոցով, ձևավորվում է ազգային կոնսոլիդացիայի արտաքին սինդրոմի պատկեր: Կոնսոլիդացիայի ներքին սինդրոմի պայմաններում հասարակությունը հայտնվում է այնպիսի սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցության տակ, որոնք հասցեագրված են առաջին հերթին ազգաբնակչությանը և սահմանափակվում են ներքին տեղեկատվական դաշտով [տե՛ս 7]: Հնարավոր է նաև առանձնացնել գործոնների այնպիսի մի տեսակ, որն իր ներգործության ուղղվածության տեսանկյունից հասցեագրված լինի թե՛ արտաքին և թե՛ ներքին լսարանին: Նշենք նաև, որ Արցախում պատերազմական գործողությունների զինադադարի կնքման փուլում արձանագրված ազգային կոնսոլիդացիայի սինդրոմի երևույթն առ այսօր պահպանում է իր սոցիալ-հոգեբանական ներգործությունը՝ ստանալով նորանոր ձևեր և արտահայտչամիջոցներ [տե՛ս 8]:

Նշենք նկարագրված երևույթի դրսևորման որոշ գործոններ ներկայիս արցախյան հասարակությունում:

Գործոններից առաջինը վերաբերում է «առանց պատերազմի, առանց հաշտության» իրավիճակին, որի վերաբերյալ կարծիք է հայտնել Լ. Հարությունյանը [4, էջ 542-549; 5, էջ 21-24]: Հեղինակը անդրադառնում է այն փաստին, որ «առանց պատերազմի, առանց հաշտության» իրավիճակում հայտնված հասարակության զարգացման համար հնարավոր ուղիներից երկուսն են համարվում իրատեսական և արդիական: Ուղիներից մեկը նախանշում է պատերազմական գործողությունների վերսկսման և առճակատման հնարավորությունը, իսկ մյուսը՝ հաշտության կառուցման և պահպանման տեսլականը: Արցախյան ազգաբնակչությունը այս փուլում հայտնվեց սահմանային մի իրավիճակում, երբ արդեն կարծես թե լայնածավալ պատերազմական գործողությունների վերսկսման վտանգը թուլացել է, բայց, այնուամենայնիվ, չի կարելի ասել, որ ձեռք է բերվել հաստատուն հաշտություն: Նման պայմաններում սոցիալ-քաղաքական և հոգեբանական տարատեսակ գործոնների փոփոխումը կամ տրանսֆորմացիան կարող են հանգեցնել իրավիճակի կա՛մ պատերազմական, կա՛մ հաշտողական լուծումներին: Հեղինակը նշում է նաև հասարակության նման սահմանային, միջանկյալ պայմաններում սոցիալական

զարգացման այնպիսի գործոններ, որոնք ուղղորդվում են ապագա հաշտության կնքմանն ու իրավիճակի հանգուցալուծմանը: Այդ գործոններից են՝

- կոնֆլիկտի եզրափակման կամ տրանսֆորմացիայի ձևերի մշակումը,
- «թշնամու» պատկերի և բռնության հնարավորությունների թուլացումը,
- հաշտության հաստատման կոնստրուկտների բացահայտումը,
- քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական սկզբունքների ձևավորումը [4, էջ 542-549]:

Արցախում «առանց պատերազմի, առանց հաշտության» հասարակության կոնֆլիկտոգեն հիմքերից առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում երկրի պաշտպանական կառույցների ընդլայնման փաստը: Անկասկած, այդ կառույցների ներկայությունն ինքնին նպաստում է զինադադարի պահպանմանն ու ազգաբնակչության խաղաղությանը, բայց, այնուամենայնիվ, նշենք պաշտպանական ինստիտուտների ևս մի ընկալում. որքան մեծ ուշադրություն է տրվում երկրի պաշտպանական կառույցներին, ազգաբնակչության մեջ այդքան ավելի է ամրապնդվում այն մտավախությունը, որ իրական պատերազմական գործողությունների վերսկսման վտանգը դեռևս չի անցել, և հասարակությունը շարունակում է գտնվել «առանց հաշտության» պայմաններում:

Ի հավելումն վերոգրյալի՝ նշենք ևս մի գործոն, որի առկայությունը ամրապնդում է ազգաբնակչության մեջ «առանց հաշտության» կոնստրուկտի առկայությունը: Խոսքը վերաբերում է նրան, որ ներկա սահմանային սոցիալ-հոգեբանական իրավիճակում գտնվող արցախահայությունը երկար տարիներ դուրս է մնացել արցախյան հիմնախնդրի շուրջ բանակցություններին ակտիվ մասնակցության հնարավորությունից, ինչի արդյունքում մարդկանց մեջ ձևավորվել է այն կարծիքը, որ նրանք իրենց ճակատագրի տերը չեն: Ստեղծված իրավիճակում բանակցությունների լիիրավ սուբյեկտ չհանդիսանալու փաստը ևս ամրապնդում է հասարակության «առանց հաշտության» գոյատևման ընկալումը:

Անդրադառնանք նաև այն գործոններին, որոնք ի հայտ են գալիս ի հակադրություն կոնֆլիկտոգեն հոգեբանական կոնստրուկտների: Առաջին հերթին հարկ է նշել երկրի ներսում զարգացող ժողովրդավարական ինստիտուտների գործոնը: Ակնհայտ է, որ արցախահայությունը ընտրել է քաղաքական, սոցիալ-տնտեսական և հոգեբանական կենսակերպ կազմակերպող ժողովրդավարական մեխանիզմների ներդրման ճանապարհը, որը խոսուն փաստ է հասարակության զարգացման ու աշխարհին ներկայացման տեսակետից: Այդ զարգացումները, միտված լինելով երկրի ներսում վարչատնտեսական ձևերի մշակմանը և սոցիալ-հոգեբանական անկաշկանդ, առաջադեմ մթնոլորտի ձևավորմանը, ի հարկե, կրում են նաև միջազգային հանրությանը ներկայանալու իմաստ՝ որպես պրոգրեսիվ, ժողովրդավարական քաղաքական միավոր: Այդպիսի ներկայացումն ինքնստինքյան ենթադրում է պատասխան վերաբերմունք արտաքին աշխարհից, որն արցախյան այս «առանց պա-

տերազմի, առանց հաշտության» սահմանային իրավիճակը պարտավորվում է լուծել նմանատիպ ժողովրդավարական սկզբունքներով՝ հօգուտ «առանց պատերազմի» դիրքորոշման:

Եզրակացություն

Վերը նշած սոցիալ-հոգեբանական գործոնների քննությունը թույլ է տալիս եզրակացնելու «առանց պատերազմի, առանց հաշտության» հասարակությունների, ի դեմս Արցախի, երկբևեռ զարգացման հնարավորությունների մասին: Ավելին՝ «առանց հաշտության» դիրքորոշման ընտրությունը կարող է պայմանավորված լինել ոչ միայն արտաքին գործոններով, այլև ներքին՝ հոգեբանական այնպիսի գործոնների առկայությամբ ու արդիականացմամբ, ինչպիսիք են՝

- «թշնամու» պատկերի արդիականացումը,
- երկրի պաշտպանական կոնստրուկտների պահպանումը,
- հասարակության անմասն լինելը միջազգային բանակցային գործընթացներից,
- հնարավոր վտանգի երկարատև սպասման անորոշությունը,
- սոցիալ-տնտեսական իզոլյացիայի պայմաններում աճող սոցիալական պահանջմունքների անբավարարվածությունը,
- ներքին կոնսոլիդացիայի սինդրոմի թերզարգացվածությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ղահրամանյան Կ. Հ., Ղազիյան Ա. Ս.** «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. պետականության ակունքները», Երևան, 2008
2. **Մարության Հ.,** «Հայերի ցեղասպանությունը. պատմական հիշողությունը և ստերեոտիպերի փոխակերպումը ըստ Ղարաբաղյան շարժման ցուցապաստառների», - Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր. Արցախ,-Գիտական նստաշրջան, Զեկուցումների հիմնադրույթներ, Հայաստանի ազգագրության պետական թանգարան, Երևան, 1992
3. **Арустамян Р. С.** Провозглашение независимости НКР и становление ее национальной государственности //Republic of Nagorno-Karabakh Past, Present and Future,- International Scientific Conference, June 21-24, Stepanakert, Yerevan, 2007
4. **Арутюнян Л**. Карабахское общество на этапе “ни войны, ни мира”: особенности момента и логика демократических перемен //Republic of Nagorno-Karabakh Past, Present and Future,- International Scientific Conference, June 21-24, Stepanakert, Yerevan, 2007
5. **Бабаян Д**. Существование НКР в контексте внутриармянской политики и международных отношений //Republic of Nagorno-Karabakh Past, Present and Future,- International Scientific Conference, June 21-24, Stepanakert, Yerevan, 2007
6. Энциклопедический словарь, т. XIII А, С. Петербург, 1894
7. **Ядов В. А.** Социальные и социально-психологические механизмы формирования социальной идентичности личности // Мир России, 1995, Ж3-4
8. **Anderson B.** Imagined. Communities. Reflections on the Origin and Spread of Nationalism. L.-N.Y., 1992,-1nternational Encyclopedia of Social Sciences, ed. By Still, D.L.-New York.

ARAIK FIRYAN
Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Applicant

SOCIO-PSYCHOLOGICAL DESCRIPTION OF THE ARMENIANS' ETHNIC SELF-CONSCIOUSNESS IN ARTSAKH REGION

The article presents the socio-psychological description of the national self-consciousness of Armenians in Artsakh region. Some written evidence is given that describes the characteristics of national identity. Dynamics of national and international perceptions of the current situation in Artsakh and the impact of these perceptions on the development of national self-consciousness of Armenians living in Artsakh are presented. Some factors of manifestation of national self-consciousness in the current Artsakh society are considered.

АРАИК ФИРЯН
соискатель АПГУ

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКАЯ КАРТИНА НАЦИОНАЛЬНОГО САМОСОЗНАНИЯ АРМЯН АРЦАХА

В статье представлена социально-психологическая картина национального самосознания арцахских армян. Приведены некоторые письменные свидетельства, которые описывают особенности национального самосознания. Также представлена динамика национального и международного понимания современного состояния арцахской проблемы и влияние этих представлений на развитие национального самосознания арцахских армян. Рассматриваются некоторые факторы проявления национального самосознания в нынешнем арцахском обществе.

Հոդվածը ներկայացվել է տպագրության 25.01.2019թ.,
ուղարկվել է գրախոսության 10.04.2019թ., հանձնվել է տպագրության 23.04.2019թ.:

УДК 338.2

ОЛЬГА ЧУПРИС
доктор юридических наук, профессор

АДМИНИСТРАТИВНО-ДЕЛИКТНАЯ САНКЦИОННАЯ ПОЛИТИКА В УСЛОВИЯХ ЛИБЕРАЛИЗАЦИИ ЭКОНОМИКИ РЕСПУБЛИКИ БЕЛАРУСЬ

Аннотация

В правовом государстве административное наказание призвано выполнять не только карательную функцию, но и выступать гарантом признания, соблюдения и защиты прав человека и юридических лиц. В целях рационального сочетания, гармонии интересов личности, общества и государства законодатель наряду с определением содержания права устанавливает административные наказания и тем самым пределы его ограничения.

Ключевые слова и словосочетания: *санкция, санкционная политика, административная ответственность, административное наказание, конфискация, взыскание.*